Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 22-ի N 899-Ն որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը հայտարարում է մրցույթ ստորև թվարկված Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) համար:

հ/հ	**Կազմակերպության կամ ՓԲ ընկերության անվանումը**	**Մրցույթ անցկացնելու օրը և ժամը**
1	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ	**15.01.2019թ. ժամը՝ 10.00**
2	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	
3	«Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ	
4	««Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ	
5	«Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
6	«Երևանտրանս» ՓԲԸ	
7	««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն վերը թվարկված պաշտոններն զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության գործունակ, չափահաս քաղաքացիները:

Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության գործադիր մարմինների (այսուհետ՝ Տնօրենների) ընտրության պարտադիր պայմաններն են՝

- բարձրագույն կրթություն
- վերջին տասը տարվա ընթացքում առնվազն 2 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ.
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն

(Սահմանադրություն, քաղաքացիական օրենսգիրք, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենք՝ բաժնետիրական ընկերության Տնօրենի ընտրության համար, կամ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության Տնօրենի ընտրության համար, աշխատանքային օրենսգիրք, Տնօրենի լիազորությունների շրջանակներին առնչվող համապատասխան ոլորտի օրենսդրություն, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հարկային օրենսդրություն, «Գնումների մասին» օրենք և այլ իրավական ակտեր).

- կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն

Տնօրենի ընտրության (նշանակման) լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն (տնօրենի պարտականություններն ամբողջական նկարագրված է տվյալ կազմակերպության կանոնադրությունում).

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

* * *

Դիմող անձինք մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).

7) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).

9) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Անձը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներն ապահովվում են թեստային առաջադրանքներով:

Ընդունել ի գիտություն, որ Տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի շենքում (Արգիշտի 1)՝ ըստ ժամանակացույցի:

Փաստաթղթերն ընդունվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտի փողոցի հ. 1 հասցեում գտնվող վարչական շենքի հ.201 սենյակում /հեռ. 011-514-135/ ամեն օր՝ աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը՝ 10.00-ից 17.00-ն (ընդմիջում՝ 13.00 – 14.00), բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝ 08.01.2019թ.: